Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
հուլիսի 2-ի N 1133 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՄ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ, ՀԱՐԿԱԴԻՐ ՏԵՂԱՀԱՆՎԱԾԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ (ԱՆԿԱԽ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՁԵՎԻՑ) ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲՆԱՒՐԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ

1. կենցաղային և անձնական օգտագործման՝ օգտագործված սարքեր՝ յուրաքանչյուր տեսակից 3 հատ.

2. օգտագործված կահույք՝ յուրաքանչյուր տեսակից մեկ լրակազմ.

3. անձնական գործածության օգտագործված իրեր և այլ տնային օգտագործված գույք՝ առանց քանակային սահմանափակումների.

4. անձնական օգտագործման տրանսպորտային միջոց հանդիսացող ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցներ, դրանց կցորդներ՝ յուրաքանչյուր տեսակից մեկ միավորից ոչ ավելի քանակությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
հուլիսի 2-ի N 1133 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ՄԻՆՉԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆՈՒՄԸ՝ ԱՌՆՎԱԶՆ 12 ԱՄԻՍ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԲՆԱԿՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԵԿՑՎՈՂ ԵՎ (ԿԱՄ) ՉՈՒՂԵԿՑՎՈՂ ՈՒՂԵԲԵՌՈՎ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ 5000 ԵՎՐՈՆ ՉԳԵՐԱԶԱՆՑՈՂ ԱՐԺԵՔՈՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԻՐԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ

1. կենցաղային և անձնական օգտագործման սարքեր՝ յուրաքանչյուր տեսակից 2 հատ.
2. անձնական գործածության իրեր՝ յուրաքանչյուր տեսակից 10 հատ.
3. այլ տնային գույք՝ յուրաքանչյուր տեսակից 6 հատ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ